,,ԱՐԱՐԱՏԻ,, ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

«Արարատի» մարտ—ապրիլ համարում Արժանապատիւ Կոմիտաս վարդապետը մի երկար քննադատութիւն է տպել մեր ձայնագրած և ներդաշնակած «Երգեցողութիւնք սրբոյ պատարագի» աշխատութեան մասին։

Մենք աւելորդ ժամավաճառութիւն ենք համարում պատասխանել այս քննադատութեան կէտ առ կէտ։ Սակայն չենք կարող չընկատել, որ եթէ Արժանապատիւ Հայրը իւր երաժշտական ուսումն աւարտած լինէր—նա ոչիմ երաժշտութեան ուսանող է Բերլինում—ինքը չէր գրի շատ այն բաներից՝ որ գրել է իւր յօդուածում։ Նա երաժշտական այբուբէնի հազիւ դեռ կէսը սովորած՝ դատողութիւններ է անում երաժշտական այնպիսի գրուածքների մասին, որոնց քննադատելու համար հարկաւոր է իմանալ ամբողջ այբուբէնն և մի բան էլ աւելի, ուստի հարկաւ իւր չգիտեցած բաները նկատելով այդ գրուածքներում՝ նրանց սխալ է համարում։ Այլապէս ինչպէս բացատրել այն տարբերական երաժշտութեան դասերը, որ այսօր «Արարատի» միջոցաւ մեզ տալիս է, մինչդեռ այդ դասերը մենք քսան տարի առաջ սովորել ենք ու գիտենք, և դեռ Հայր Կոմիտասին էլ աւանդել ենք իբրև աշակերտի երկու տարի առաջ։

Մենք ցանկանում ենք, որ մի բանիմաց երաժշտագէտ ինկատ առնելով այն սահմաններն ու նպատակները, որով ղեկավարուել ենք «Պատարագի երաժշտութիւնները» ներդաշնակելիս՝ ասէր իւր հեղինակաւոր խօսքը մեր աշխատութեան մասին։ սակայն Հ. Կոմիտասի երկար յօդուածը թող չցաւի—զուրկ է որ և է կարևորութիւնից մեր աչքում։ Իսկ եթէ երաժշտութեան անծանօթ մարդիկ նրա բազմաթիւ երաժշտական տերմիններից շշկլուելով նրան երաժշտագէտ կհամարեն՝ թող այս անգամ բաւականանայ այդ պատուով։ *

Երաժշ. Մ. Եկմալեան.

* Ի յարգանս պ. երաժշտագէտի տպագրում ենք այս նամակը, թեև իրոք քննադատութեան դէմ հերքում տպել կարելի եւ պարտաւորեցուցիչ պէտք է լինէր միայն այն ժամանակ, երբ գրքի հեղինակը մի դրական առարկութիւն է յառաջ բերում կամ մի թիւրիմացութիւն ուղղում, եւ ոչ թէ իւր տգիտութիւնն ու արհամարհանքը յայտնում։ Խմբ.

ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Շնորհակալութեամբ ստացել ենք Մայր Աթոռի մատենադարանի համար հետեւեալ գրքերը.

1. Н. Марръ—къ критикѣ исторіи Моисея Хоренскаго. 1. С. Петербургъ, 1898. Հեղինակից։

2. L'univers et sa Formation par N. Dagavarian, Constantinople, 1898. Հեղինակից։

3. Ե. Թոփչեան, Ցունասատանի անցեալից պատմական տեսութիւն. Ս. Պետերբուրգ 1898. Հեղինակից։

Ստացուած է նաեւ Արժանապատիւ Տ. Խորէն աւագ քահանայ Միրզաբէգեանից՝

1. Մի մագաղաթեայ բոլորագիր, 23⁰ շարական, պատկերազարդ, գրիչն է Կարապետ, գրութեան տեղը Բերկրի, հայոց ՋԼՈՆ թուին։

2. Մի ձեռագիր մաշտոց, թուղթ, 16⁰, ՌՃԳ թուին գրուած, գրիչն անյայտ։

3. Մի տարեկան քարոզգիրք բոլորագիր, Կ. Պոլսի Ցակոբ պատրիարքի աշխատասիրութիւն. 1755 թ։

Մատենադարանապետ՝

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ.

Հասցէն՝ Въ Монастырскую Библіотеку, Эчміадзинъ.